

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

07 օգոստոսի 2020թ.

Արագածոտնի մարզ,
գ. Վարդենուտ

Ծրագրի նկարագրությունը՝

Սույն ծրագիրը համարվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և «ՌԻԴ» ՍՊ ընկերության միջև ստորագրված համագործակցության հուշագրի մաս, որն իր մեջ ներառում է.

1. Ջրամբարի կառուցում
2. Շուրջ 300 ֆեռմերային տնտեսությունների ստեղծում և կառուցում
3. Ճոպանուղու կառուցում
4. Դահուկային սպորտի զարգացում

ՕՐԱԿԱՐԳ

Ռուցոգ Ինվեստի փոխնախագահի կողմից ներկայացվեց ներդրումային ծրագիրը: Հանդիպման ընթացքում ներյակացվեց՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված ներդրումային կոնցեպտուալ տարբերակը՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու և թիրախային բնակավայրերի բնակչության ներգրավմամբ:

Նշվեց, որ գերծանրաբերնվածություն չի առաջանալու արոտավայրերի վրա, քանի որ նախնական հաշվարկներն արվել են համապատասխան:

Հարցին թե ինչպես պետք է ձեռք բերվեն այդ տնտեսությունները, ստացվեց պատասխան, որ տնտեսությունները չեն տրամադրվելու բնակիչներին, այլ հնարավորություն է տրվելու և առաջնահերթ նախապատվություն է տրվելու մարզի բնակիչներին աշխատելու տնտեսությունում և ապրելու տնտեսությունում:

Ծրագիրը միտված է մարզի սոցիալտնտեսական խնդիրները լուծելու ինչպես նաև կանգնեցնելու տարածաշրջանից արտագաղթը:

Նախատեսվում է սովետական ժամանակաշրջանի նախատեսված, բայց չկառուցված ջրամբարի կառուցում՝ սեզոնային ջրի խնդիրը լուծելու համար, քանի որ նույնիսկ մի քանի օրվա ջրի

պակասը կարող է աղետալի լինել տնտեսության համար և բարձր դիրքի շտրեիվ հնարավոր կլինի
ինքնահոս եղանակով ապահովել հասանելիությունն անգամ դժվարանցանելի տեղամասերին:

Ջրամբարի նախագիծը պատրաստելուց հաշվի է առնվել սարերից իջնող առվակների
բնականոն ուղղությունների չփոփոխումը:

1. Աղբյուրի համայնքի ղեկավար Կ. Արարատ
2. Արարատի Վարչապետի ղեկավար Լ. Մարտիրոսյան
3. Դապրատի Վարչապետի գրասենյակի ղեկավար Գ. Մարտիրոսյան
4. Զարար լիս Գրչ լիս Զարարի ղեկավար Գ. Մարտիրոսյան